

## ՄԵՐ ԴՊՐՈՑՆԵՐԸ ԵՒ ՆՈՅԱ ՆԵՐՔԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

Բանակոիւը բուն հայկական եկեղեցու և այլակրօն հայերի մասին մեր լրագրների մէջ երկար ժամանակից հետէ մեծ աեղ բռնելով շատ կենսական խնդիրներ բոլորպին մոռացութեան են արուել: Յուղ-ւած խնդիրը երբէք պարզուելու չէ, որովհետեւ մեր լրագրները փոխանակ խնդիրը պարզաբանելու համար ջանալու, միմեանց օձիքից են քաշքաշում: Յանկալի էր որ վերջ տրուեր այդ բանակուուին, և մեր լրագրները զբաղուեին լինելիք ուսուցչական ժողովինսպատակով: Եւրեանց էջերը բանային այն յօդուածների համար՝ որոնք կարող էին նպաստել յիշեալ ժողովինսպատակներին: Յանկալի էր որ մեր լրագրները ուսուցչական ժողովինսպատակը բազմակողմանի կերպով քննադատելուց յետոյ, իբրև մի մտածուածնիւթ, առաջարկեիննուրան, որ առանց երկար ու բարակ, և միենոյն ժամանակ նպատակին չփառերվող խորհրդածութեան ու տարագէպ վիճմունքների, մի որոշ եզրակացութեան հասնէր: Անընդհանուր յանկալի էր, որ մեր լրագրները ուսուցիչներին նախապատրաստէին լինելիք ժողովի համար: Ահա այս է այժմ մեր բոլորիս սրտի յանկալի խնդիրը, որով պիտի որոշուի հայ դպրոցների վիճակը:

Եմ այս յօդուածի նպատակն է առիթ տալ մեր լրագրներին զբաղուիլ լինելիք ժողովով: Իմ նպատակն է սորանով զրգուել բոլոր ուսուցիչներին կոմ դպրոցով հետաքրքրուող անձնինքներին իւրեանց զիտողութիւններն ու նկատողութիւնները ի լոյս հրատարակել: Ուսուցչական ժողովի նախապատրաստութեան համար Աշակը մի անգամ հրաւեր կարդաց, բայց թէ ինքը և թէ ընթերցողները շուտով մոռացան այդ հրաւերը և ոչ ոչինչ չխօսեց: Աիսյն Պ. Տիգրան Փիրումեանը Աշակի 230 համարի մէջ « Հայոց լեզուի դաստիարակութիւն » վերնագրով յօդուածը տպելով՝ խոստացաւ մի շաբք յօդուածներ լոյս ընծայել այդ խնդրի մասին:

---

Մեր դպրոցական պատմութիւնը ահա տասն տարի է, որ նոր շրջան է սկսել: Ահա տասն տարի է, որ զպրոցական գործով զբաղւողները ամեն ջանք գործ են դնում դպրոցները յարմարացնել այն սկզբունքին, որ « ուսումնի լուրջ, մանուկը զուարթ »: Մանդ, եւ համարեա թէ մասամբ իւեկ այդ պարոնները հասել են իւրեանց նպատակին: Այդպիսի անձանց

անուները անմոռանալի կմնան. իսկ նոցա վաստակը պէտք է անկեղծօրէն խռոտվանել՝ որ գոհացուցիչ է:

Աշխարհի օրէնքն է միշտ կատարելագործուել և միշտ յառաջ գնալ. այդ օրէնքին ամեն ոք հետևումէ. Հայերն ել պէտք է հետեւն՝ և հետեւմեն. Մեր այժմեան գլրոցները հակապատկիրն են այն գլրոցներին որոնք տան տարի առաջ գոյութիւն ունեին. Այն ժամանակ մանուկը պարաւորուած էր առանց հասկանալու բերան սովորել այն՝ ինչ որ ուսուցիչը նշանակումէր կամ մելազրում: Այն ժամանակ սակաւ բացառութեամբ գասազբերը գրաբառ լեզուով էին գրուած. զասուանգութիւնը նոյնպէս գրաբառ աշխարհաբառի թարգմանութեամբ էր կատարվում: Հայոց պատմութիւնը անցնում էին Պ. Երզնկեանի շարագրոծ գրքի վերայ, Արքազան պատմութիւնը՝ Արք. Խաչակի քահ. Սահառունու գրքի վերայ, Քրիստոնէական վարդապետութիւնը՝ կամ Ալամդարեանի և կամ Մսերի գրքերի վերայ, Քերականութիւնը՝ ընդհանրապէս Զամշեանի ու Ալանթեանի գրքերի վերայ, որոնք գրաբառ էին. իսկ աշակերտները պարտաւորուած էին թութակի պէս բերան անել՝ առանց հասկանալու: Քարերազգաբար այդ գրքերը այժմ մեր գրադարանների զարդն են ու գլրոցական դասագրքերի հանգույալ կամ զառամեալ պապերը:

Եթէ չեմ սիսալվում, աշխարհաբառ լեզուով դասադրքի գոյութեան սկզբնապատճառը Տաճկահայերն եղան. նոցա շաւզով գնալով Թուստհայքը և քայլ առ քայլ հետեւելով Եւրոպացւոց արդի մանկավարժութեան կանոններին՝ աւելի յառաջ զնացին՝ հետ զհետէ կատարելագործուած դասագրքեր ու մանկավարժական մատեաններ ի լոյս ընծայելով: Գործը արտաքուստ շատ գոհացուցիչ դրութեան մէջ է: Համեմատաբար, Հայոց մէջ զպրոցական խնդիրով աւելի զբաղուողներ կան՝ քան իւրեանց շուրջը զտնվող միւս ասիական, օրինակ պարսիկ տաճիկ, ևլու ազգերի մէջ: Արտաքուստ ասացի. ուրեմն ներքուստ գոհացուցիչ դրութեան մէջ լինելը տարակուսելի է, կամ կարծելու է՝ որ համապատասխան չէ արտաքինին: Աչ ոք չէ կարող ուրանալ այժմեան գլրոցների համեմատաբար գոհացուցիչ դրութիւնը չների վերաբերութեամբ: ոչ ոք լուր չի արհամարհիլ. ոչ ոք չի ցանկանալ բծախնդիր Զոհիլսի պատուին արժանանալ՝ ոչ ինչ բանի շհաւանելով: Բայց որովհետեւ մարդուս համար բնածին է միշտ իւր ունեցած վիճակովը գոհ չլինել և միշտ ջանալ դէպի յառաջ—դէպի կատարելագոյնը, այդ իսկ պատճառով ցանկանալի էր՝ որ մեր զպրոցները աւելի կատարեալ ծրադիր ու վարչութիւն ունենային: Նկատելով մեր զպրոցների ներքին կազմուածքը, առարկաների զասատվութիւնը, տեսնվում է որ: մեր զպրոցները զեռ շատ զգալի պակասութիւններ ունին: զեռ խօսքը գործ չի գարձել: Ճանաչումեմ այնպիսի մարդք, որ մանկավարժական թիրթ էր հրատարակում և իւր թերթը լցնումէր մանկավարժութեան այս կամ այն նախագծով թէ, լուսամուտները որ կողմից և ինչպէս պէտք է բանալ: քանի խորանարդ արշին տա-

րածութեան մէջ որքան աշակերտներ պէտքէ տեղաւորել և լուսայց այդ մարդը բնաւ ուշ չէր դարձնում իւր յատուկ զպրոցի վերայ։ Դասարանն շաբաթը միանդամ էր աւելվում։ Նստարանները որոնց վերայ երբեմն 18—20 տարեկան պատանիներ էին նստում։ յատկացուած էին 6—9 տարեկան մանուկներին։ Աերջապէս գործը խօսքին համապատասխան չէր։ Ամենից շատ աչքի է ընկնում ձեւապաշտութիւնը։ որը շատ անդամ չէ յարմարվում դպրոցական աշակերտների դրութեան և ուսուցչի հանգամանքին։

Ձեւապաշտութեան համար այս ինչ առարկան դպրոցի մէջ ընդունումն դասախոսնել, իսկ այն ինչը՝ ոչ աշակերտների հետ այս կամ այն կերպ յարաբերութիւն ունենալ։ Բայց պէտք է զիտենալ, ինչ որ անհրաժեշտ չէ, նորա համար աշխատելը ժամավաճառ լինել է։ Ինչ որ բնական չէ ձանձրալի, տաղտկալի և միտնգամայն զզուելի է։ Հետեւումէ որ պէտք չէ չափազանց ձեւապաշտ լինել պէտք է հանգամանքների առաջ խոնարհւիլ։ Հայոց համար մանկավարժութեան գործով զբաղութղները Եւրոպայում ընդունուած ձեւերը Հայ դպրոցների մէջ պատուաստելու համար, պէտքէ ի նկատի ունենան նախ՝ Եւրոպացու և Հայի մէջ եղած զանազանութիւնը, նոցա ընտանիքի հանգամանքը, այդ երկու պյատարազ մարդիկների ու նոցա ընտանիքի մէջ սկզբնական կրթութիւն ստացած մանուկները, և ապա ջանային Եւրոպայից փոխ առածները յարմարացնել տեղական հանգամանքին։ Թւումէ թէ մեր մանկավարժները այդ հանգամանքին շատ սակաւ են ուշ դարձնում։ Ասսն զի ինչ որ կարդում կամ լսում են, իսկոյն, իրեւ անհրաժեշտ օրէնք աշխատումն մոցնել դպրոցների մէջ, կամ առանձին բրոշիւրներով կամ մի զասագրի յառաջարասով՝ որ շատ անգամ զասագրից աւելի տեղ է բռնում։ Դասագրերը առհասարակ թարգմանութիւն են, և պ. թարգմանիչները ուշ չեն դարձնում գոնէ յարմարացնել Հայ կեանքին. օրին. Պ. Տ. Վեռնդեանը իւր Մայրենի լեզւի Գ. տարում Աշունը նկարագրելիս, աշնան յայտարար համարումէ ցորենի և այլ հացահատիկների հասնելը։ Յայտնի է որ մեր երկիրը, ուր խաղողն ու գեղձը, բամբակն ու քնջիթը հասնումն է, հացարայսերը ու թէ աշնան սկզբում, այլ զարնան վերջին կամ ամռան սկզբին արդէն հնձվումն է։ Իսկ աշնան սկզբին, կալից կուտից պրծած՝ այդիներով են զբաղվում՝ աշնանային պտուղները հետզհետէ ժողովելով—խաղողը կթելով և լուսադրում։ Իսկ լեռնադաշտակներում, ուր հացարայսերը աշնան սկզբին են հասնում, այնտեղ ոչ խաղող կայ և ոչ մինչեւ անգամ վաղահաս կեռասը։ Ահա այսպիսի անընտրութիւն զբեթէ միշտ նկատվումէ դպրոցական ամբողջ կազմուածքի մէջ։ Հայ մանուկները պարտաւորուած են սովորել այն կարգով, որով սովորումէ Եւրոպացի մանուկը, առանց միտ գնելու թէ Եւրոպացի մանուկը նախքան դպրոց մանելը ընտանիքի և, ինչպէս այժմ ընդունուած է ասել, մանկական պարտէզների ու ծաղկոցների մէջ կրթուելով՝ բաւական պատրաստ է լինում դպրոցական

շրջանին յարմարուելու։ Նա արդեն զիտէ կարգավարութիւն և ամեն բան իւր ժամանակին անելը նորա ձեռքերը վարժ են քանոնու ու մատիտ բանեցնելուն։ Նա զիտէ վերջապէս խաղալու ու լսելու ժամանակները, նա զիտէ խնդրալու ու սովորելու ժամանակները։ Այսպիսի հարուստ պաշարով եւրոպացի մանուկը մննումէ գպրոց ու սկսումէ յատկացեալ գործը առանց զգալի ծանրութիւն դառնալու ուսուցչի վերայ։ Քայլ մերոնքը այդ պատրաստութիւնները չունին։ Հազար կրկնիր, այն՝ ինչ որ իւր կարողութիւնից վեր է, նա չի հասկանալ և չի ըմբանիլ։ Գիտեցողին՝ մէկ, չհասկացողին՝ գար ու զուռնայ։ Առած։

Ընտանիքը, ուր մեր մանուկները մեծանում են, մանաւանդ զիւղերում այն խնամքը չունին իւրեանց զաւակների կրթութեան վերայ, որ դոքա պատրաստ լինէին ենթարկուելու և յարմարուելու գպրոցական կեանքին։ Այդպիսի ընտանիքի մէջ, մանուկը եթէ մին ու ճար է՝ իւր ամեն շարժվածքի մէջ բոլորովին անկախ է լինում։ Նորան չողոքորթում են ու փայփայում։ Նորա բոլոր տեղի ու անտեղի պահանջները կատարվում են։ Որովհետեւ մանուկը երես առաջ է, նորան չ ասել չի լինիլ, ապա թէ ոչ, նա իրան պատահած իրեղէնները կկոտրատէ, ոտները գետնովը կտայ և կոկոի իւր ղընջղընջոցն ու զոռոցը։ Խոկ եթէ մին ու ճար չէ, կամ սարսափելի կերպով ստրկահողի է լինում թմրած ու բթացած ուղեղով, և կամ չափազանց պրտկերես ու յանդուգն։ Այդ երկու ծայրայել յատկութիւնները նոքա ստանումեն, առաջինը՝ եթէ թուլակազմ է և ծեծի ու քոռունցքի չի զիմանում։ Իսկ վերջինը՝ եթէ պնդակազմ է, և ծեծի ու քոթակը իւր համար սովորական են գարձել՝ իւր նպատակին հասնելու համար կամ հասնելուց յետոյ։ Հայ դպրոցները, որ ըստ բաւականին յարմարեցրած են արդի եւրոպական մանկավարժութեան սկզբունքին՝ այժմ այդ աեսակ երես առած մինուժարներով, ստրկահողի, թմրած ու բթացածներով և պրտկերես յանդուգն մանուկներով են լցուած։ որոնց հետ պէտք է վարուել ամենայն զգուշութեամբ, առանց մանկավարժութեան կանոնի մի յովահի դէմ մեղանչելու։ Հայ մանուկը ընդունվում է գպրոց, նա չգիտէ ոչ ինչ, ոչ գպրոցական կարգապահութիւն, ոչ ուսուցչի և ոչ իւր ընկերների հետ ունենալիք յարաբերութեան ձեւ։ Նորա ձեռքերը միայն սովոր են զբաղուիլ մի խողալիքով։ Նորա իւրաքանչիւր անդամը անհաշիւ կերպով շարժվումն, նա զեռ չի կարողանում իշխել իւր վերայ, նա տան մէջ սովորած լինելով ծեծկուիլ իւր եղբայրների ու քոյքերի հետ և մատնել նոցա այս կամ այն չարութեան մէջ, նոյնը կրկնումէ և գպրոցում, աւելի ազատութեամբ։ Վասն զի ծնողների կամ ընտանիքի մեծ անդամների նույնաշներէ փոխարէն, իւր առաջին կանգնած է տեսնում ուսուցչին որ « սուս, երեխայք, իսելօք կացէք » բառերից ու խնզրելուց աւելի ոչինչ չէ կարող ասել, նորան նպաստումեն իւր չարութիւնը շարունակել քազմութիւ ու բազմատեսակ բնաւորութեամբ ընկերները, գպրոցի կամ կարասիքը և նստելու յարմարութիւնը։ Տան

մէջ նա ծալապատիկ նստելով՝ համարեա կիսով չափ անդամոլու ծի զիբք էր ստանում և միայն ձեռներն ու զլուխն էր շարժում. իսկ դպրոցում՝ նստարանների վերայ նստած կափ ուսներով՝ զրեթէ բոլոր մարմառվ շարժվումէ. Աչա այդպիսի մանուկներին, նոցա դպրոց մանելու առաջին օրից, պէտք է ուսուցիչը կարդացնէ այր—բեն. հեգել տայ և ըստ նոր ձեր մանկավարժութեան հնչածը կամ հեգածը զրեթ կամ խազել. Խս չեմ կամենում ոչինչ ասել հնարաւորութեան մասին, կարող են ընթերցողները իրանք եղարկացնել.

Մեր մանկավարժները պնդումեն որ, զեռ տառը չհիգած; պէտքէ նորա ձեր՝ մանուկին խազել տալ. այդ այնպիսի մի պահանջ է, որի անշրաժեցութիւնը ամեն որ կիսուտովանի. բայց դործին արտաքուստ շպէտքէ մտիկ տալ. պէտքէ այն հանգամանքն էլ աշքի առաջ ունենալ թէ, մեր վերեւ յիշած գոեհիկ մանուկները կըկարողանան արդեօք իշխել իւրեանց անդամների վերայ կըկարողանան ըմբռնել ուսուցչի բացարութիւնները. թէ զլուխը քաշ արած, մատներով կաւիճը կպտտեն ապուշ ապուշ գետնին զրասեղանին կամ ուսուցչի երեսին մտիկ տալով. և ի պատասխանի ուսուցչի բոլոր ջանքերին, (զիւրըմբռնելի կացուցանել ուսանող աշակերտի համար իւր պատմածը), աշակերտը իւր մանկական անմեղ ու անմիտ ժողիտով բաւականութիւն կտայ ուսուցչին՝ որ նոյն բանը հարիւր անդամ կրկնելուց ու ձևացնելուց յիտոյ, թէպէտ չու զենայ էլ արտաքուստ իւր զայրոյթը և ձանձրոյթը արտայայտել, արդէն զայրացած ու ձանձրացած է իւր փոքրիկ ընկերի բժմամտութիւնից. Խնչ սոսկալի պիճակ. մարզս չկարողանայ իւր հոգւոյ կիրքը արտայայտել. Խնչ պախարակելի՛ գործ, առանց զիմացինի հոգւոյ կարողութիւնը շափելու, ձևապաշտութեան հետևելով բացարութիւններ ու նկարներ անել, և պարտաւորել որ, խեղճ վեց տարեկան գոեհիկ մանուկը ըմբռնի ու նկարի. իսկ երբ չըկարողանայ ըմբռնել, բթամիտ և ապուշ անուանել չէ՞որ, երբ աշակերտը առաջին անգամից ընկճուեց, առաջին անգամից ընդարմացաւ, էլ կկորցնի այն վատահաւութիւնը թէ, կարելի է դեռ սովորել. կկորցնի ուժինութիւնը, կթուլանայ և սովորելու համար մի անպէտ և ապուշ աղոյ կդառնայ: Աըկորցնի կայտառութիւնը, և երբ ուսուցիչը զէպի այդպիսի մանուկը դառնայ, նա (մանուկը) իւր անձը մի անելանելի բարիւթիւններուի մէջ կերեակայի և ջանք կանի իւր օձիքը ինչ և իցէ հնարքով ուսուցչի ձեռքից ազատել: Ըստ իս, զայրացած լինել, բայց պարտաւորուել ձևի համար ու բախ գէմք ցոյց տալ, սաժանելի ստրկութիւն է պարտաւորուղի կողմից. իսկ բռնակալութիւն՝ պարտաւորեցնողի կողմից, Պատրատութիւն չունենալ մի ինչ որ է գործ կատարելու, հարկազրուել անպատճառ խաթրով թէ զոռով կատարել, քաղաքավարի բռնակալութիւն է. իսկ չկարողանալ կատարելը բժմամտութեան արդիւնք կոչիլը, բժմամիտ ուղեղի ծնունդ պէտքէ համարել.

Մեր երիտասարդ ուսուցիչները, մանկավարժները և սկզբնական բասա-

զիրք պատրաստողները՝ որ ամեն դեպքում հետևում մեն Եւրոպոյի և յատկապէս Գերմանիայի մանկավարժութեան։ որոնց խօսուածքի ու գրուածքի մէջ եւրսպական երեւելի մանկավարժների անունները յաճախ կրկնվում են։ զանցառութեան տալով վերոգրեալ հանգամանքը, այսպիսի դեպքում կամ վարժապետին և կամ աշակերտին անընդունակ համարելով իւրեանց պաշտօնին՝ մէկն ու մէկին արտաքսում են։ կամ պարտաւորացնում նոյն տանջանքը երկուստեք կրելու։

\* Երկուց չարեաց փոքրացոյնն է ընտրելի։ Արչափ ես գիտեմ։ կամ կարդացել եմ։ (որովհետեւ ինչպէս մեր մանկավարժներից շատերը նոյնպէս և ես ոչ Եւրոպա եմ զնացել և ոչ գերմանական մանկավարժութեան գործնականին ականատես եղել) Եւրոպայում սկզբնական զարոցները ունին դեռ մի նախապատրաստական դասարան, երիու բաժանմունքով, որոնք հայերէն լեզուով՝ կոչվում են ընտանիք և մանկական պարտէզ կամ ծաղկոց։ որոնց առաջինի կրթութիւնը ասվումէ ընտանեկան կրթութիւն։ որ շատ մեծ Ներգործութիւն ունի մանուկների վերայ նոցատմբողջ կեանքում։ Այդ ընտանեկան կրթութիւնը մեջ չկայ, կամ շատ սխալ սկզբունքի վերայ է հաստատուած, եթէ կայ էլ։

Մանկական պարտէզը այն տեղն է, ուր մանուկը մօր փաղաքշական գուրգուրանքի ու տնօյին բոլորովին ազատ կենցաղավարութեան հաճոյքից հեռանալով՝ ընտելանումէ բոլորովին այլ հաստատութեան։ հաստատութեան՝ որ իւր մոյրական տան հետ ոչինչ կապ չունի։ Նա անըցմարելի կերպով վարժվումէ այնպիսի կանոնների։ որոնք թէեն նորա ունեցած անկախութիւնը չափաւորումեն։ բայց ընկերութեան համար մի դուրեկան անդամ են պատրաստում։ Այնպիսի անդամ՝ որի ներկայութիւնը ոչ մի բանի արգելք ու խանգարիչ չի լինում։ Վերջապէս մանուկը հենց առաջին անգամ պարտաւորվումէ ամեն բան իւր ժամանակին անել։ փոխանակ ըստ հաճոյս խաղալու։ անդիտակցարար «հաց կամ փափաց» աղաղակելու։ Մանկական պարտէզ ունենալու սկզբունքը մի երկու տարի յառաջ մեր պարբերական թերթերում՝ երկար խօսակցութեան առարկայ գարձաւ։ բայց շուշով էլի լուսթեան վարագուրի տակ մտաւ առանց կարծեմ, էական մի արդիւնքի։

Մեր ծխական դպրոցների պէս հաստատութիւններում։ կամ մեր հասարակութեան մէջ ընդհանրապէս դժուար է մանկական պարտէզի սկզբունքը էացնել։ այդ ամեն ոք կխոստավանի։ Բայց չէր կարելի արդեօք դպրոցների մէջ այնպիսի կանոն զնել, որ աշակերտները միանուագ ընդունուեն։ Նորամուտ փոքրահասակ երկուն աշակերտների համար մի սինեակ յատկացուէր։ որ զասերի ժամանակ այդ փոքրիկ բ-շ-բ-ները ըստ կամաց զբաղուէին թիթե խաղերով։ օրինակ թուղթ ծալելով, կոլարելով և այլ այնպիսի բաներով։ որով պարտաւորուած լինէին լուսթեան վարժուիլ։ Այդ ժամանակ կարելի էր նոցա վարժեցնել քանոն ու մատիտ գործածելու մէջ։ քարետախտակ ու քարազրիչ բանեցնելում։ Առաջին-

ներով՝ մանուկները կսովորէին տողել որչափ կարելի է ուղիղ, իսկ վերջիններով՝ նոյա մատները կվարժուէին գծելուն կամ նպատակաւոր իւազեր անելուն ըստ թելաղբութեան հսկողի օրովհիւն նորաեկ աշակերտները, որոնք ոչ ինչ պատրաստութիւն չունին նպատակաւոր գծեր քաշելու և պարտաւորվումեն անպատճառ հենց առաջին օրից հնչած տառը ձեւակերպել, նոքա անընդունակ են լինում այնուհետեւ կանոնաւոր և վայելուց գիր գրելուն. մանուկները համոզուած լինելով թէ զիտեն արդէն տառերը գծել կամ ձեւակերպել, էլ ուշ չեն դարձնում այդ գծերը գեղեցկացնել. մինչդեռ հին ժամանակներում ամենընտիր և կանոնաւոր գրողներ կային, այժմ դոքա հաղուազիւտ են, Ես տեսել եմ աշակերտներ, որ չնայելով երեք չորս տարի է կարգում և գրում են, այնու ամենայնիւ գեռ չգիտեն թէ ինչ տառը տողի որ տեղից սկսելու է, և տառի վերջին ծայրը տողի վերայ են վերջացնում, իսկ չ տառը տողից սկսելով դարձուածը տողամիջում են թողնում. Այդ նորանից է, որ մանուկները նախքան գրելը, վարժուած չեն լինում տառերի էական գծերին, և ուսուցիչները նկատելով թէ ուղղագրութիւնը տեղն է, միտ չեն դնում տառերի ձեւակերպութեան գեղեցկացնելուն. Մանուկներից յաջողակներին՝ կարելի էր առանձին մի կարգ բաժանել և նոյա վարժել գրերի էական գծերի հետ այնպես, որ նոքա կարողանային տիրել իւրեանց ձեռքերին այնչափ, որ ուսուցչի նկարած ու հնչած տառը իրանք հնչելուց յետոյ, կարողանային ձեւակերպել. Վերոյիշեալ կրթութիւնը, որ կարելի է սահմանափակել մի ուսումնական տարրուայ շրջանով, մանուկին կպատրաստէին կարգալ սկսելու համար ամենայարմար մի անձն. ուսուցանելու ժամանակ խեղճ ուսուցիչը շատ մեծ գժուարութիւն չէր կրիլ և սրտամաշ չէր լինիլ, պարտաւորուած լինելով ըստ մանկավարժութեան օրինաց, իւր հոգու անմիտար տրամադրութիւնը ուրախ գերքով արտայայտել. (Գուցէ մաքովս անգամ շանցնէր այս՝ ինչ որ գրումեմ, եթէ փորձը իմ վերայ էլ կրկնուած չլինէր): Այս տարժանելի զրութիւնը ունեցել են կարծեմ այն բոլոր անձինքը, որոնք մեր դպրոցների փոքր մանուկների հետ գործ են ունեցել. Մեր ծխական դպրոցները, որ երկու դասարանից են բազկանում՝ իւրաքանչիւրում տասնաւոր դասակարգութիւններ ունենալով, այս զրութեամբ հենց առաջին տարուանից փոքր իշտէ կարգի կմտնէին, նախակրթարանից յաջողակները մի տարուց յետոյ անցնելով առաջին դասարանը. այդ դասարանի առաջին տարելութացքը մտնելով Մայրենի լեզուի կամ մի այլ յարմարագոյն այրբենարանի և, տարին միայն առանց ուրիշ առարկաներով ծանրաբեռնուելու սովորէին. Երկսեռ մանուկներին միասին կարելի է թողնել մինչև Ա. դասարանի Բ. բաժանմունքը կամ տարելովթացքը, որոնց տարիքը չեն թոյլ տայ ոչինչ կեղակարծ ենթագրութիւնների մէջ մտնել. Այնուհետեւ յաջող պատրաստութիւնից յետոյ, տղայքը՝ տղայոց, իսկ աղջկերքը՝ որիորդաց դպրոցների Ա. դասարանի Բ. տարենթացքը մտնելով՝

պարտաւորուելին սովորել Մայրենի լեզուի Բ. տարին. Մուսերէն այր բեն և հետ զշետէ յառաջ գնալով կարդալ դրել ու հասկանալ կարդացածը. Արօնից պարտաւորուելին մի քանի թեթև աղօթքներ բերան սովորել. Յաջող պատրաստութիւնից յետոյ Բ. դասարանի Ա. տարենթացքը մտնելով՝ մանուկները սովորէին մայրենի լեզուի Գ. տարին՝ դասները պատմելով ու գրելով, քերականական մասնբանիները ջոկելով, Մուսերէնից՝ ընթեռնլով ու թարգմանելով. Արօնից՝ սովորէին Սրբազան պատմութիւնը մինչև Յիսուս Քրիստոսի ծնունդը համառօտ ու պարզ կերպով. Հայոց պատմութիւնից՝ սովորէին համառօտապէս մինչև Արշակունեաց հարստութեան վերջը. իսկ Աշխարհագրութիւնից՝ բնական մասը պարզ և մեկին կերպով, Յաջող պատրաստութիւնից յետոյ Բ. դասարանի Բ. տարենթացքը մտնելով, մանուկները սովորէին հայերէն լեզուից ինչ և իցէ մի յարմարադոյն ընթերցարանի վերայ քերականական կանոններ, նախագասութիւնների բաժանումն ու վերլուծութիւն և շարադրել ուսուցի թելաղրած առակներ կամ պատումներ, Բ. դասարանի Բ. տարելնթացքում՝ պէտքէ աշակերտներին ընտեղացնել մեր նախնեաց մատենագրութեան լեզուին՝ պարզ գրաբառ մատեաններ (որինակ Աւետարան, Եղիշէից՝ ոգեորող ընդ նմին և հասկանալի տեղերը) կարդալ և աշխարհաբառ թարգմանիկ տալով: Արօնից՝ սովորէին Յիսուս Քրիստոսի կեանքը այս աշխարհի վերայ, Քրիստոնէական եկեղեցու կազմակերպութիւնը, Քրիստոնէական եկեղեցու հաւատոյ հանգանակը (Հաւտամքը) և եկեղեցու խորհուրդները իւրեանց իմաստով. ազգային եկեղեցու առանձնայատկութիւնքը և ներկայ զրութիւնը՝ համառօտ և մեկին կերպով: Մուսերէնից՝ սովորէին կարդալ վարժ, թարգմանել, մասն բաները որոշել, նախագասութիւններ կազմել ու գրել: Հայոց պատմութիւնից՝ սովորէին մարզպաններից սկսելով մինչև մեր ներկայ ժամանակը համառօտ և մեկին տեղեկութիւնները միայն. իսկ Աշխարհագրութիւնից՝ քաղաքական մասը համառօտ և շատ համառօտ. սովորէին տէրութեանց ու նոցամայրազաքների անունները, ուր գտնուիլը, կառավարութեանց ձեզ և ազգերի ինչ կրօն ունենալը, Մոռացայ յիշել թուարանութիւնը, որ պէտք է սկսել նախակրթարանից և վերջացնել Բ. դասարանի Բ. տարելնթացքում՝ պարզ կոտորակների չորս գործողութիւնը սորվացնելով: Պէտք չէ յիշել, որ թուարանութեան ուսուցիչը պէտք է աշխատի աշակերտներին թուարանութեան այնպիսի խնդիրներ լուծել տալ, որոնք մանկան ապագայ կեանքի հետ գործ ունենան:

Այս բոլոր պատրաստութիւն ունեցող աշակերտները եթէ չեն կամնալ մի տարի ևս մնալ գպրոցում՝ կատարելագործուելու համար, կարող են վկայականի պէտ միբան ստանալ և արձակուիլ. Այսպիսի կազմուած զպրոցները ինչպէս երեկո հինգ տարելնթացք կունենան, ենթադրելով որ աշակերտներից ոմանք կարող են մի տարով յետ մնալ այս կամ այն դասարանում վեց կամ առ առաւելն եօթ տարի մնալով գպրոցում, նոքտ եթէ եօթն տա-

ըեկան հասակում մոռած լինեին դպրոց 14 տարեկան պատանի դարձած դուրս կգային այնտեղից բաւական հարուստ պաշարով։ 14 տարեկան հասակը մանուկի համար այն ժամանակն է, երբ նա պատանեկութեան մէջ մտնելով՝ էլ միամիտ տղայ չէ. նորա ընչանցքի տեղը արդեն սկսումն թիանալ, և նա ուշիմութիւն է ունենում աւելի մեծ զօրծերով զբաղուիլ։ Նորա ջղերը այնքան ամբացած են լինում, որ նա կարող է և՛ արհեստ սովորել, և վաճառականի ձեռքի տակ ծառայիլ, և՛ իւր ուսումը շարունակել արքունի դպրոցներում։ ուր ոչ ինչ նեղութիւն կրելու չէ. որովհետև նա արդէն իւր մայրենի լեզուով էական առարկաներին փոքրի շատէ հմտացած լինելով՝ կարող կրինի առանց ձնշուելու շարունակել իւր ուսումը։ (Այս վերոգրեալ հատուածը այնպէս զրուեց, որ կարելի է ոմանք կարծեն թէ մի յանդուգն մարդ իրեւ կանոն է առաջարկում դըպրոցներին. սակայն գրողը այդ յանդգնութիւնը բնաւ մտքովը չի անցնիլ, այլ մի անձնական կարծէք համարելով, կառաջարկի ընթեցող հասարակութեան ուշադրութեանը)։

Մեր ծխական դպրոցներում մի քանի առարկայ բոլորովին պարտաւորական են։ Այդ առարկաները հենց սկզբից — մանուկի ուսումնարան մտնելու օրից մատակարարվում է նոցա։ Առարկաներն են. Մայրենի լեզու, կրօն, Ռուսերէն, Թուարանութիւն, Վայելչագրութիւն, Երգեցողութիւն։

Արդէն յայտնի եղաւ որ, մեր մանուկները ուսումնարան մտնելիս՝ ոչ ինչ պատրաստութիւն չեն ունենում. թող այդ. տգէտ կամ անդրագէտ գուեհիկ ծնողների խնամքի տակ մեծացած լինելով մանուկները՝ աներևոյթ, անկերպարան և չափազանց երես առած յամառ կամ բոլորովին ստրկացած ապուշ արարածներ են լինում։ Աչա այդպիսիների հետ պէտք է պարապել վերոյիշեալ առարկաները։

Ասենք մայրենի լեզուի ուսումը, որովհետև սկսվում է մեքենական խաղերով և նոցա հեգելովը, թէպէտ շատ գժուար, բայց կարող է մատչելի լինել։ Ի՞նչ խորհուրդ ունի հենց մայրենի լեզուի ոյբենէ հետ աշակերտի ուղեղը ծանրաբեռնել մի բոլորովին օտար և դեռ շլած լեզուի դասաւանդութեամբ։ Մինչդեռ մանուկը եթէ իւր բոլոր ուժը մայրենի լեզուն ուսանելու վերոյ գործ գնի, կարող է շուտով առաջ գնալ։ Երբ կսկսի մայրենի լեզուով փաքր իշատէ վարժ կարգալ այնուհետեւ գժուարութիւնը կը մնայ միայն օտար լեզուի տառեր ծանաչելը, որից յետոյ մանուկը, որովհետև արդեն գիտէ կարդալ, իսկոյն կսկսի հեգել և վերջապէս կարդալ։ Օտար լեզու ասելով իմ խօսքը իշարկէ սուսերէնի մասին է, Առուսերէն լեզուի անհրաժեշտութիւնը մեր դպրոցներում անուրանալի է. վասն զի մենք, ապրելով Առուսիոյ բարեխնամ կառավարութեան ներքոյ, իրքեւ տիրող ազգի լեզու, պէտք է սովորենք, Պէտք է սովորենք ոչ ձեի, շնորքի համար, այլ պէտք է սովորենք սովորելու համար. պէտք է սովորենք իրքեւ մի կտոր հաց ծարելու միջոց, առանց որի շատ գժուարին կլինի մեր ապ-

բուսեը այս աշխարհի մէջ՝ Արովչետե զատարան մանելիս՝ լեզու չիմացողին յետին զրագիրն էլ մալորեցնում է. լեզու չիմացող արշեստաւորը մեծամեծ դժուարութիւնների է հանդիպում. իսկ վաճառականը, որ գործունի ամեն պատահած մարդու հետ, անելանելի դրա թեան մէջ մնալուց յետոյ չափազանց կարմրում է և իւր յաճախորդներից շատելին կորցրնում. Տէրութեան կամ Թուսաց լեզուն, որ այսքան անհրաժեշտ է մեղ չամար, պէտք է օրինաւոր կերպով ուսուցանել ու հետզետէ զրաւիչ անել և ոչ թէ չենց երկրորդ զասից ձանձրացուցիչ և մի աւելորդ բեռ զարձնել. Թուսաց լեզուն սովորողը պէտք է փոքրի շատէ պատրաստութիւն ունենայ, որ կարողանայ ըմբռնել այդ լեզուին վերաբերեալ առանձնայատիութիւններ—բառերի սեռերը, շեշտադրութիւնը և համաձայնութիւնը. Այս ամենը մեր նախապատրաստականի մանուկները պարտաւորուած են անպատճառ սովորել. Մեր մանկավարժները, որ պահանջում են առաջ՝ բառի միտքը հասկացնել և ապա բառը հեղել տալ, սյրպիսի մանուկներին ի՞նչպէս են նոցա բոլորովին անընդել բառերը հասկացնում և ապա կարդալ տալիս. 2Եմ կարող պնդել թէ, մանուկները մայրենի լեզուի տառերից դժուար կը ճանաչեն օտար լեզուի տառերը. շեմ կարող պնդել թէ, մայրենի լեզուի հեղերից դժուար կը հեղեն օտար լեզուի վանկերը. բայց կը պնդեմ որ այդ ամենը ոչինչ օգուտ շեն տալ մանուկին այն ժամանակ, երբ մայրենի լեզուի բառերը դժուարութեամբ է հասկանում. այդ ժամանակ եթէ չասեմ ամենեին օգուտ չի քաղիլ մանուկը լեզուի բառերի արտասանութիւնից, բացարձակ կասեմ՝ որ ստացած օգուտը շատ չնշին կը լինի համեմատելով կորցրած ժամանակի հետ. որովհետեւ այսօր սովորած բառը վաղը կը մոռանայ նա, այսօր ուսուցիչի հազար չարչարանքով հասկացրած բառերի նշանակութիւնը վաղը նոյն չարչարանքը պէտքէ կրի միտը բերել տալու համար. Եթէ չին դպրոցի զասազրբերը—տետրակ, միականոն սաղմոս, ութիւնոն սաղմոս ժամադիրք և այլն դուրս նետուեցին դասադրքերի շաբթից, որովհետեւ թէ բառերը և թէ բովանդակութիւնը անմատչելի էին աշակերտին. այն մարդիքը, որ այսօր առանձին հրճուանքով են միշում այս յաղթութիւնը, ի՞նչպէս են հաշտվում այն հանգամանքի հետ, երբ աներեւոյթ և անկերպարան մանուկը իւր խելքից հասկացողութիւնից գուրս, բնաւ չը լսած բառերը պէտք է հեղի Բառեր, որոնց նշանկութիւնը եթէ բերան էլ անի, չորս օրից յետոյ մոռանալու է. Ըստիս առևերէն սկսելու է Ա. դասարանի Բ. տարերնթացքում, այսինքն մանուկի դպրոց մտնելուց երկու տարի յետոյ. միայն շտրամը երեք կամ չորս դասի աեղ, վեց դաս առնելով.

Կրօնը սրտի զգացմանքի արտաշայտութիւնն է զէպի ամենակարող արարին Աստուածը, Կրօնագիտութիւնը այս սկզբունքի հետ սորվեցնում է մարդուն իւր յարաբերութեան ձեւը Արարշի հետ. կրթում է մարդուն առաքինութեան և այն ամեն կատարելութեան մէջ, որ հաճելի են Արարին Աստուածուն. Կրօնի յիշեալ սկզբունքը հիմնուած է փիլիսոփայա-

կան դատողութիւնների, բարոյագիտութեան, ազգային աւանդութեան, (քրիստոնեաների համար) քրիստոնէական վարդապետութեան վեճ, բարձր և միանդամայն վերացական տեսութիւնների վերայ. Դպրոց նոր մտնող մանուկը, որ զեռ այր բեն չի կարողանում չեղել, ի՞նչպէս կարող է ըմբռնել կրօնի դասը. շատ շատ նա կարող է թութակի պէս կրկնել թէ մեղ և բոլոր աշխարհը ստեղծելէ Աստուած. Այդ բանը աշակերտներին կրկնել տալու համար՝ բաւական է առ առաւելն հինգ դաս. մնացեալ դասերում ամբողջ տարին ի՞նչ անելու է. Հրէական ազգի պատմութիւնը, որ մեր դպրոցներում կրօնի դասի տեղ է ստացել, իրեւ պատմութիւն դարձեալ անմատչելի է մանուկին, որովհետեւ նորա ուղեղը միշելու և ըմբռնածը պատմելու չափ զարգացած չէ. Ականջները շատ բանի չեն ծառայում. նոքա հազիւ իւրեանց տիրոց անունը լսելուն են նպաստում, և կատարել տալիս այն կարծիկ պատուերը, որ թելազրում է ուսուցիչը. Մանկան ուղեղն ու լսելիքը շատ գործ չեն կատարում. նորա ձեռքերն ու ոսքերը, լեզուն ու աչքերն են գործ կատարողը. և այս անում են մեքենաբար, թող ուսուցիչը ի՞նչ կամենայ խօսի, նա իւր խաղով է զբաղվում մինչև իւր անունը լսելը. Այսպիսի գէպքերում ի՞նչ ուսուցանի, ի՞նչ պատմի կրօնի ուսուցիչը, որ մանուկներին զիւրըմբռնելի և զըրաւիչ լինի. Ուսուցիչը շատ անգամ սխալվում է իւր ենթազրութիւնների մէջ՝ թէ, կրօնից այս ի՞նչ կամ այն ի՞նչ կտորները հետաքրքիր կը լինեն աշակերտին, և տեսնում է հակառակը. Այդ ժամանակ արգէն յայտնի կարելի է գուշակել ուսուցիչի զրութիւնը մի ծայրայիշութիւնից միւսն է անցնում. Նա փորձում է ազօթքներ բերան անել տալ. յանկարծ տեսնում է, որ աշակերտը ոչ կարողանում է սովորել, որովհետեւ զիր ու կարդալ չգիտէ՝ որ բերան անի. և ոչ հասկանալ՝ որովհետեւ նորա միտքը հասկանալու չափ մշակուած չէ. այդ ամենի վիրայ աւելանում է մի երրորդ անձի կողմնակի հեգութեամբ կամ սառն սրտով յայտնութիւնը թէ իշնէ ուսուցիչը մանկան ընդունութեամբ այդունունութեամբ ու մանկան ընդունութեամբ. և այս խօսքը շատ անգամ ասում է այնպիսի մինը, որին եմէ իւր ասած խօսքի բառերի նշանակութիւնը առանձին առանձին հարցնես, ոչ կը հասկանայ և ոչ կարող կը լինի մի գոհացուցիչ պատասխան տալ. Կրօնի ուսուցիչի զրութիւնը նշնում է լինում, ի՞նչ որ լինում է ուսուերէնի ուսուցչի զրութիւնը որ չը նայելով թէ իւր շուրջը գտնվողները գովում են իւր մանկավարժութեան մէջ ունեցած հմտութիւնը, այնու ամենայնիւ ոչի՞նչ զգալի յառաջազիմութիւն չէ նկատում իւր աշակերտների մէջ, բարեխիղձ ուսուցիչը իւր ստացած ոռօճկով այնքան չի ոգեսրվում, որ չափ իւր աշխատանքի արդիւնքը տեսնելով. Երբ ուսուցիչը այդ մսիթարութիւնից զրկուած է լինում՝ թուլանում է և ակամայից է մտնում դրաց ու դասարան.

Խօսքս ամփոփելով հետեւալ իմ կարծիքները յանձնումեմ մանկավարժ տեսուչների ու բանիմաց հոգաբարձուների նկատողութեանը. Այդիմ

կարծիքները լուսվի խօսքեր չեն, այլ անձնական փորձառութեան արդիւնք, նաև՝ ընդունել մանուկներ տարուայ մի ժամանակին միայն, այն է Սեպահեմբերին. որով կվերանայ այն անյարմարութիւնը, որ միշտ նկատելի է ինուամ մեր դպրոցներում. այդ անյարմարութիւնիցն է աշակերտների զանազան դասակարգութիւնների բաժանումը, որ մեծապէս արդելք է լինում կարգապահութեան ու յատաջաղիմութեան. Ասան զի աշակերտները զանազան աստիճանի հասկացողութեան տէր լինելով՝ ինչ որ ուսուցիչը անհըսաժեշտ հարկ է համարում մինին պատմել, նորա կողքին նստաղը, որ արդէն վաղուց սովորել է սկսում է, եթէ ուշազիր է եղել, քմի տակից նոյնը պատմել, կամ ընկերի անհասկացողութիւնը արհամարհել քոքութով և քրթմանցելով. իսկ եթէ ուշազիր չէ՝ խաղում է, ընկերին բոթում է, և եթէ հարկ տեսնես ի զդուչութիւն հրահիրելու, պէտք է ականջներդ սրես նոցա զանգաները լսելու. հազոր կրկնիր թէ, զանգան չես ընդունում, նոքա տանը սովորել են իւրիանց յանցանքը մէկ մէկի վերայ ձգել. պահանջումն բաւականութիւն և պէտք է մի բաւականութիւն տաս ապա թէ ոչ կըսկսի լալ:

Բ. Անզրագէտ ծնողաց զաւակները, որոնք ոչինչ պատրաստութիւն չունեն, մի յատկացեալ սենեակի մէջ կարգապահութեան վարժեցնել ինչպէս զրուեց:

Գ. Նորանկ աշակերտներից նորա որոնք կարգապահութեան ընտելացած են, փոխադրել նախապատրաստական դասարանը և առանձին բաժանմունք կաղմելով՝ վարժեցնել քանոն ու մատիտ, քարագրիչ, ու քարետախտակ գործածելուն և մայրենի լեզուի տառերի էական գծերը խաղելուն:

Դ. Ա. Պատարանի Ա. բաժնի մէջ բացի մայրենի լեզուի այրենարանից, ըերանացի թուեր համարելուց և սովորածը զրելուց՝ ուրիշ առարկաներով չծանրաբեռնել մանուկներին. Օգուտ քաղելով գէպքից՝ ներշնչել աշակերտների մէջ կրօնի այնպիսի տարիերները, որոնք մատչելի կը լինին մանկան ուղեղին. Իւրաքանչիւր տօնական արձակութիւնը՝ բացատրել կամ պատմել տօնի պատճառը և նորա անհրաժեշտութիւնը, օրինակ, ծննդեան տօնին՝ պատմել Յիսուս Քրիստոսի ծնունդն ու մկրտութիւնը, մկրտողի անունը, որ մանուկները միշտ լւել են. որովհետեւ Ա. Յովհաննէս Մկրտչը մեր ժողովրդի մուրազատու սուրբն է. և Ա. Կարապետի անունը յայտնի է մանուկին ծենց լեզուն բացուած օրից, յիշել թէ որտեղ է մկրտուել. Տօնի օրերից յետոյ պատմածք մանուկներին յիշել տալու համար պատմել առաւորութիւնը, որ գործել է նոցա վերայ տօնական հանդիսակատարութիւնը եկեղեցու մէջ.

Գալով կրօնի զասաւանդութեանը՝ մանուկներին ալոթք բերան անել տալիս, ոմանք պնդումն թէ, միտքը բնաւ շը պէտք բացատրել. այդպիսիքը հակառակումն իւրիանց պաշտած սկզբունքին, մեղանչու մն մանկալարժութեան այն օրէնքի գէմ թէ, աշակերտի զասի կամ կարգացածի մէջ մի բառ անգամ թողելու. չէ առանց նորա նշանակութիւնը բացատրե-

Եռ մանուկներին, եթէ աշակերտը չը պէտքէ հասկանայ իւր արտասանած աղօթքի միտքը, ինչո՞ւ ուրեմն պէտքէ պարտաւորուի սովորել, կրօնը սորվացնումնք աշակերտներին, նոցա վարդն ու բարբը աղնուացնելու համար. եթէ աշակերտները միայն բերան պէտքէ անեն աղօթքների մի քանի հատուած առանց միտքը հասկանալու, ինչ շահ ոյդ մեքենական աշխատութիւնից, Դիցուք աշակերտը բերտնացի լաւ ասում է «Հայր մեր» աղօթքը. քանի որ նորա իմաստը չի հասկանալ, ինչ բարոյական օգուտ կը քաղի նորանից, Մանուկները, որոնք հայր մայր և մի քանի աղգակցական բառեր սովորելուց յետոյ Աստուծոյ անունն են սովորում, պէտք չէ իմանան թէ մենք ինչու ենք Աստուծուն եւ հոյր անուանում։ Աշակերտները, որ սովորութիւն ունին ընկերների հետ խաղալ և մի շընչին առիթ գտնելով կուռել նոցա հետ և իւրեանց անձը արդարացնելու համար զանգատել, պէտք չէ հասկացնել նոցա, որ ոյդ վարմունքը մեր հայր Աստուծուն հաճելի չէ, և եթէ մենք մեր ընկերներին չենք ներել, չենք թողնիլ նոցա զեպի մեզ ունեցած պարտքը, Աստուծած էլ մերը չի թողնիլ, «Թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց» խօսքը աշակերտներին սորվացնելիս, պէտք չէ ջանալ արմատախիլ անել փոքրիկ մանուկի անզիտութեամբ կատարած մատնութեան սովորութիւնը, որ եթէ մնայ նորա մէջ, նորա հասակի աճելու հետ կաճի և զիտակցական կրտառնայ։ Բայց աշակերտները ոյդ բաները ըմբռնելու համար պատրաստութիւն պիտի ունենան։

Տեր մանկավարժ տեսուչներն ու հոգաբարձուները պահանջումնեն կրօնի սկզբնական դասերը աղօթքով սկսել, Յայտնի է որ մեր ծիսական զպրոցների ուսուցիչները մեծ մասամբ շատ սահմանափակ ուսում ունին, շատերը չգիտեն թէ ինչպէս պէտքէ անցնել այս կամ այն առարկան։ եթէ ձեռքներին չունեն դասագիրք, Ցանկալի էր որ թեմական Պ. վերատեսուչները, որ կրօնի դասերին այնքան մեծ նշանակութիւն են տալիս, նորա զասաւ անդութեան մի ծրագիր կազմելին և յանձնէին իւրեանց իշխանութեան ստորագրեալ ուսուցիչներին. յատկացնելին թէ կրօնի դասերը որ զբքի վերայ և ինչ ձեռվ պէտքէ սորվացնել. կրօնի սկզբնական դասերին որ աղօթքները պէտքէ սորվացնել։ Յայտնի է որ մանուկները չորս հինգ տարի մնում են դպրոցում և կրօնի դասը, որ սկսվում է այր բեն հեգելու օրից, իւր նպատակին չի ծառ այսում, այս նորանից է որ շատ անխնամ կերպով է մատակարարվում։ Վասն զի աշակերտը գովոցից գուրգ եկած ժամանակը հազիւ Սըրբազն պատմութիւնից Խորայէլացիների Եղիստոսից գուրս գալու անցքին են հասած լինում. շատ շատ նոցա վերջին դասը Մովսէսի մաշն է լինում կամ Պաւմի թագաւորութիւնը. Յայտնի է որ սրբազն պատմութիւնը իւր Աստուծապաշտ հովիւ ու թագաւոր հերոսների կենսագրութեամբ հէրիաթի ձեռվ սորվեցնումնք մանուկներին, Աստուծոյ մարդիկների հետ ունեցած յարաբերութեան ձեւ ցոյց տալու համար նոցա լաւ կամ վարի կամ չար գործած ժամանակ, Երանի թէ մեր ուսուցիչները դուք

այդ եղբակացութիւնն էլ կարօղանային հանել սրբազն պատմութեան դասաւանդութիւնից։ Ապա թէ ոչ Սրբազն պատմութիւնը կրօնի գասի տեղ չի կարող բռնել։ և իրաւ որ մանուկը հնեց այր բենից Կրօն սովորելով հանդերձ դպրոցից գուրս եկած ժամանակ իւր աղջային եկեղեցուց ու կրօնից ոչինչ տեղեկութիւն չէ ունենում։ Եւ որպէս զի մանուկները զպրոցում սովորեն կրօն սովորելու համար և ոչ շնորքի, ըստիս պէտք Սրբազն պատմութիւնը համառօտ շատ համառօտ բայց հիմնաւոր կերպով անցնել։ պէտքէ սորվացնել Աստուծոյ գոյութիւնը և արարշագործութիւնը վարբով ապահանուած մարդոց ի պատիժ եղած ջրհեղեղը մարդիկների կուապաշտութեան մէջ ընկնելն ու Սրբահամի Աստուածապաշտութիւնը Մովսէսի գործերն ու նորա բարոյական առողջապահական և կրօնական օրէնքների մասին համառօտ տեղեկութիւն։ Յիշել որ Ճշմարիտ աստուածպաշտութիւնը միայն Խորայէլացիների մէջ մնաց սորվացնել մի քանի բարեպաշտ դատաւորների ու թագաւորների պատմութիւն ու նոցա յաջողութիւնը մի քանի մալի դատաւորների ու թագաւորների պատմութիւնն ու նոցա թշուառութեան մէջ ընկնելը այն եղբակացութիւնը հանելով որ բարեգործները միշտ Աստուծոյ օր հնութիւնը վայելելով բախտաւոր վերջ են ունենում իսկ շարագործները՝ թշուառ վախճան։ Այսպիսով՝ շուտով անցնել քրիստոնէական եկեղեցու կրօնի վարդ ապետութեանը Մեր աշակերտները զպրոցից գուրս եկած ժամանակ կարողանում են պատմել հրէական եկեղեցու էկսերը արարողութիւնները տաճարի բաժանմունքները յատուկ անուններով իսկ իւրեանց մայր եկեղեցու վերայ ոչինչ հասկացողութիւն չեն ունենում որ շատ ցաւալի բան է Քրիստոնէական եկեղեցու կրօնը պէտքէ սկսել նորա հիմնադիր Յիսուս Քրիստոսի պատմութեամբ Հարկաւոր գէպքում աւետարանի բնագիրը կարգալով ու պատմելով Այնուհետև անցնել կրօնի վարպապետութեանը ընդհանրապէս յիշել տիեզերական երեք ժողովները որոնց սահմանադրութիւնը ընդունել է հայ եկեղեցին։ սորվացնել հայ նշանաւոր հայրապետների պատմութիւնը նոցա արած բարեկարգութիւնները ազգային նշանաւոր ժողովների նպատակը մեր եկեղեցու առանձնայատկութեան էական պատճառը Եւ այս բոլորը այնքան հմտութեամբ սովորէին մանուկները որ մի հայ քրիստոնեայ մարդու պատիւ բերէր։

Հայոց պատմութեան ուսումը մեր զպրոցներում պէտքէ աւանդել ոչ որպէս հէքիաթ այլ որպէս պատմութիւն պատմութիւնը լաւ ուսումնական սիրելու համար պէտքէ զիտենալ տեղը ուր պատմական գէպքերը տեղի են ունեցել ժամանակը՝ երբ անցքը կատարուել է առանց այդ երկուսի պատմութիւնը իւր էական նպատակին չի կարող հասնել ։ Մանուկները Հայոց պատմութիւնը իւրեւ պատմութիւն սովորելու համար ոչ թէ թագաւորների ու նահապեաների անուններն ու նոցա արարքը պէտք է զիտենական այլ պէտք է զիտենան թէ Հայաստանը որպիսի զիրք ունէր ի՞նչ ազգութիւն է ունեցել Հայաստանի զիրքը Հայոց կեանքի վերայ քանի

մասն էր բաժանվում: Ի՞նչ յարաբերութիւն ունեին այդ մտսերը միմեանց հետ ինչ հետեանք ունեցաւ այդ մասերի միմեանց հետ ունեցած յարաբերութիւնը 2նայելով որ մայրենի լեզուից և կրօնից յետոյ անհրաժեշտ առարկաներից առաջինն է Հայոց պատմութիւնը՝ բայց որքան այդ առարկայի անհրաժեշտութիւնը ամեն որ խոստովանումէ: այնքան և անտարբեր է զեղի այդ առարկայի դաստուրութիւնը: Այս իսկ է պատճառը, որ մինչեւ այսօր մի օրինաւոր դասագիրք չունենք այդ առարկայի համար: և ոչ ոք մտածում չէ հոգալ այդ պահանութիւնը: Մեր գպրոցները աննողատակ առարկաներով խճողուած լինելով՝ Հայոց պատմութեան վերայ ուշք զարձնող չի լինում: և աշակերտաները չնայելով որ երեք չորս տարի շարունակ դպրոցում Հայոց պատմութիւն են սովորում: բայց շատ քերին է յաջողուած մինչև Բագրատունեաց հարստութեան վերջը: կամ շատ շատ մուրեն — Լուսինեան Լևոնին Փարիզում թաղուիլը հասնիլ, որից յետոյ էլ Հայոց պատմութիւնը չի շարունակվում: կարծես Լևոն վեցերորդի մեսնելով Հայերը դադարումն ապրելուց կարծես հայութիւնը չքանումէ աշխարհի երեսից: Մանուկները որ մեռութակի պէս բերանացի կրկնումն Աւաչէի կամ Տիգրանի պատմութիւնը: բնաւ չպիտին թէ երեանը իւր նահանգով երբ մտաւ Ռուսաց տիրապետութեան տակ: ինչ մարդկի են Խոյեցիները Արարանու: Գեօկշայի: Դարաշիշազու: և Շօրագեալի ժողովուրզը: և Իրք գաղթեցին երեանու նահանգը: Զգիտեն թէ զես 150 տարի առաջ Հայ ժողովուրզը իւր մելիքներով ու հայրապետներով ինչ յարաբերութեան մէջ էին Ռուսաց վիհապետների հետ Սկսած մեծն Պետրոսից Հայերը ինչ ակնկալութիւն ունեին այդ հուժկու ազգից: որին նախախնամութիւնը զօրացնումէր օր ըստ օրէ պաշտպանելու ընկճած քրիստոնէութիւնը մահմտականների բարբարոսութիւնից: Զգիտեն թէ ովքեր են իւնիտօրները: ինչպէս մտան Հայաստան: ինչ խաղեր խաղացին Հայաստանում: Զգիտեն թէ ինչի՞ ամայացաւ Հայաստանը: ով էր Հաչ—Արասը: և որպիսի դրութեան մէջ էր Հայաստանը այդ աշխարհաւեր և միւնցն ժամանակ աշխարհաշնչն թագաւորի օրով: որի մասին պատումներ և մասալներ զեր պատվումն Հայ գիւղերում: Այդ ամենի վերայ ոչինչ տեղեկութիւն չունին: Հայելով որ այդ ժամանակամիջոցը աւելի հարուստ է պատմական նիւթերով: Մենք չունինք դասագրեր Ազգային պատմութեան: Նշխարհաղբութեան: Մայրենի լեզուի քերականութեան: որոնք մեր համբակ ուսուցիչների ձեռքում կարող էին մեծ գործ կատարել: Քրարառը որպէս զիտութիւն սովորելու միջոց անպէտք համարուելուց յետոյ մեր յարգելի մանկավարժները չեն կամենում մայրենի լեզուով դասական զբքեր պատրաստել: Ռուսահայոց մանուկները պարտաւորուած են մի քանի առարկաների դասերը սովորել Տաճկահայոց լեզուով զրուած դըրքերի վերայ: որ շատ չնչին օգուտ տալուց յետոյ մի քանի վեասներ ունի առաջին Տաճկայոց ուղղագրութիւնը մի քանի բաղաձայն տառերում հակառակ է Ռուսահայոց ուղղագրութեան: Բ. նոցա բարեառ ը բոլորովին

տարրեր է մեր բարբառից։ Այն աշակերտները, որոնք սովորել են Տաճկահայոց բարբառով՝ զրուած զասազբիրի վերայ, երկար ժամանակ չեն կարողանում դուրս գտն ոյդ բարբառի ազգեցութեան տակից։ որ խոսնուելով մեր բարբառի հետ՝ մի այլանգակ ոճ են ձևացնում։

Երգեցողութիւնը մարդուս գոյութեան առաջին օրից սկիզբն առնելով՝ մարդկութեան հետ անվախճան մեալու է։ Խո չեմ կամնում երգերողութեան անհրաժեշտութիւնը ցցց տալու համար նորա մարդուս վերայ արած Կերդործութիւնը թաւել։ բաւական է յիշել որ տղան օրորոցի մեջ իւր մօր օրօրների եղերական եղանակի ազգեցութեան տակ մոռանում իւր Ճիշն ու աղաղակը և զմայլմանքը ընդարմացնում նորան խորը քնով։ Հովուի սրինգը զիւթումէ իւր հօտին։ Երգը մարդուն մոռանալ է տալիս կեանքի քաղցրութիւնը և սպեռելով՝ մղումէ պատերազմի զաշոք կամ մեռնել կամ մեռցնել։ Աերջապէս հարսանիքի ուրախութեան ժամանակների էլ երգեցութեան ժամանակների էլ երգ են երգում մեռելի դագաղի վերայ էլ։ Եկեղեցում Աստուծոյ անունը երգեցողութեամբ ենք փառաբանում։ Զկոյ աշխարհիս վերայ մի բան որ երգեցողութեան պէս առանց ձանցրացնելու մարդիկներին դէպի ինքն հրապուրէր։ Երգեցողութիւնը իւր այսքան մեծ ներգործութեամբ մարդկային կեանքի մեջ վայելչութեան աղը կարելի է համարել։ Երգեցողութիւնը մեր պալուցներում ուսանելի առարկաներից մինն է։

Մինչև վերջին տարիներս գարոցներում երգեցողութեան աւանդելի առարկան Շառականն էր և մարդիկ իւրեանց կեանքի ամրողջ կէոր նույրումին այդ առարկայի ուսմանց բայց կատարելապէս չէին կարողանում հմտանալ։ Դպրոցական կազմակերպութիւնը փոխուելուց յետոյ երգեցողութեան առարկայի զասաւանդութեան ձևն ես փոխուեց։ Շարականների հետ մատակարարուել սկսեց նաև ազգային երգերի զաւ։ Մեր ազգը զարմանալի զիւրամեք ազգ է։ Մենք բաց ի շարականներից ու մի քանի հոգեոր երգերից՝ ազգային երաժշտութիւն չունենք։ ցաւ ի սիրտ պէտք է ասել որ Շարականների ու հոգեոր երգերի եղանակներն էլ անարատ չեն մնացել։ Նոցամեջ ես ճաշակաւոր մարզը կարող է նկատել օտար խառնուրդ։ Մեր ազգը ազգային երգերի և ժողովրդական երգերի եղանակ չունի։ Այժմեան ազգային երգերի եղանակները առնուած են եւրոպական և տաճկական խաղերի եղանակներից։ Խոկ ժողովրդական երգեր եթէ կան, նոքա թէ իմաստով և թէ եղանակով այլազգի են։ բացառութիւն կարելի է համարել մի քանի ջանքելունք և լինելու որոնք անարգուած են և երբէք ուսումնարանների սեմբց ներս մտնելու շեն իրեւ երգեցողութեան ուսանելիք։ Որշափ էլ բաւն ազգային եղանակ չունենաք, բանաստեղծութիւններ շատ կարելի է ինչ և իցէ մի եղանակով երգել։ և աչա գոքա են կազմում մեր երգեցողութեան զասերի նիթը։ Բանաստեղծութիւններից շատելը մանաւանդ Տաճկահայոց զրուածները, միայն բուռն երեակայութեան ծրանունդ են, որոնք ոչ ինչ կապ չունին երգչի հանգամանքի հետ։ այդպիսիների մեջ ընտարութիւն անելու է։ Երգեցողութեան թէ եղանակը և թէ

բանաստեղծութեան միոքը մարզու ու տրամադրութիւնից կախում պէտք ունենան:

Երգեցողութեան եղանակը մինչեւ վերջին տարիներս բերանացի էր աւանդվում: Այս օրից երբ Հայկական Զայնագրութիւնը իւր անձուկ չըջանից շնորհիւ Տ. Տ. Գէորգ Դ. Կաթուղիկոսի զուրս եկաւ, Երգեցողութեան դասաւանդութեան մէջ էլ զգալի փոփոխութիւն մտաւ: Հայկական Զայնագրութեան շնորհիւ շարականի բոլոր եղանակները երգելու համար առ առաւելն մի տարի բաւական է: Հայկական Զայնագրութիւնը հոչ գեորական շրջանի մէջ սկսուելով ու ընդհանրանալով, այն նպաստը ազգային համարուած երգելին չէ մատուցել, ինչ որ տեսնվում է հոգեոր երգելի վերաբերութեամբ: Ըարականը, Ժամագրքի և Ս. Պատարագի երգերը Հայկական Զայնագրութեան նիշերով տպագրուեցին, բայց դեռ մի օրինաւոր երգարան գուրս չէ եկած: Այդ ևս ձայնագրագետների մեջն է: ուրոնք մինչեւ հիմա կարողացած կըլինէին, եթէ կամենային, ժողովրդական հաստ կտուր աղդոյին երգելից ընտրելագոյններն ու շատ տարածուածները հաւաքել դասաւորել ու տպագրել Հայկական Զայնագրութեամբ: Զայնագրագետների մէջ միայն մի մարդ, Խզնիկ քահանայ Երզնկեանն է: որ իւր կարողութեան չափ աշխատում է Հայկական Զայնագրութեան արհետը հասարակել: Մաս ութն տարի է որ Հայկական Զայնագրութեամբ մուտք է գործել Ռուսա—Հայքում: Այս ութն տարուայ մէջ յարգելի ձայնագրագետները ջանք չարին փարատել տարակուսանքը ումանցից, ուրոնք չեն հաւատում թէ փօ: է: զէ: բէով կարելի է երգել ճիշտ եղանակներ: ինչպէս անհաւատալի չէ զօ: բէ: մի ֆասոյով երգեցողութիւնը: Զկարողացան փարատել տարակուսանքը, որ մի գծի վերայ զրուած նիշերը (տառերը) նոյնպէս կարող են ցոյց տալ ձայնաստիճանները ինչպէս Եւրոպական հինգ գծերի վերայ եղած կտորելը: Հկարողացան փարատել տարակուսանքը թէ 2այնագրութեան արհետը մի և նոյնն է: տարբերութիւնը միայն ձևերի ու անունների մէջ է: ինչպէս են առհասարակ ազգաց այր բենը: եթէ կարելի է հայոց այր բենով էլ կարդալ, ապա և Հայկական ձայնանիշով երգել կարելի է: Հայկական Զայնագրութիւնը այն առաւելութիւնն էլ ունի: որ մի գծի վերայ զրուելով մեծ զիւրի թիւն է տալիս թէ ընթերցանութեան և թէ զրաթեան:

Երգեցողութեան դասաւանդութեան գալով: Զայնագրութիւնը չէ կարելի հենց նախապատրաստականից սկսել: որովհետեւ մանուկները երրէք կարողանալու չեն ոչ ձայնաստիճանն ըմբռնել՝ որոշել: և ոչ տեսողութեան շափերը կամ ժամանակները գործադրել: նոցա բերանացի կերպով պէտք սորվացնել կամ ևս՝ կրկնել տալ իւրեանց գիտեցած մանկական երգերը: Մանեկական երգերը միայն երգվում չեն: մանուկները երգելիս խաղեր և ձևացութեր էլ են անում: որ մի զուարձալիք է: լաւագոյն է որ երգեցողութիւնը նախապատրաստականում կամ ա: դասարանի ա: տարելնիթացքում իրեւ զաս շաւանդուի այլ իրեւ զուարձալիք՝ դասամիջոցների ժամանակ, եսկ

երգեցողութեան գասերին նոքա միտին ունկալիր լինին երգեցողութեան ընտելանալու համար Պ. Թաշճեանի Զայնազրութեան դասագիրքը վարժութիւններ չունենալով՝ մեծ նպաստ չէ կարող ընձեռել Ցանկալի էր որ մի դասագիրք էլ պատրաստուէր, ոչ թէ Ըարականների եղանակների կանոնների համար, այլ իսկապէս Զայնազրութեան ուսումը թեթև ացնելու համար աւելի հարուստ վարժութիւններով որ աշակերտները վարժուին Զայնազրութեան տառերին, շափերի նիշերին և այլ կանոններին այնպէս ինչպէս մարդ ամրոջ այբ թենը սովորելուց յետոյ ամեն գրուածք կարգում է առանց կաշկանդուելու թէ այս ինչ կտորը այս ինչ դասագրքի այս ինչ մասին մէջ գրուածի պէս կարդալու է:

Աշակերտը Զայնազրութեան ուսումը սկսելով Ա. դասարանի Բ. տարելընթացը սկսելու մասնական երեք դասով, Բ. դասարանի Բ. տարելընթացքում այսինքն զպրոցից գուրս գալու տարին բաւական պաշար կարող է ունենալ ամեն ձայնազրուած երդ կարդալ և վարժուել գործիքի վերայ գաշնակելու:

Բնական պատմութեան ուսումը համառօտ տնցնելլը ծխական դպրոցներում շատ կարեար է. այդ առարկան կարելի է սկսել չենց Ա. դասարանի Ա. տարելընթացքից. Այդ առարկան, որ շատ հետաքրքրական կարող է լինել մանուկների համար, զժրադդարար դեռ հայ զպրոցների համար անհրաժեշտ առարկաների կարգը չէ անցել, եւ մեր զպրոցները գեռ չուայլութիւն են համարում թէ այդ առարկայի և թէ այլ առարկաների անհրաժեշտ գործիքները և պատկերները ունենալ, ինչպէս և աշխարհազրութեան քարտէզ և այլ պարագաներ ունենալը աւելորդ է համարվում:

Այս 1881 թուի ամառը լինելիք ուսուցչական ժողովը երեխ ուշադրութիւն կդարձնի դասագրքերի ընտրութեան վերայ, որոշելով թէ որ ձեռնարկները պէտք է ընդունել և ինչ ձեռնարկներ ի նորոյ պատրաստել:

Ցանկալի է որ ուսուցչական ժողովը դպրոցական խնդիրը բազմակազմանի կերպով քննազատելուց յետոյ, մի որոշ վարչական ծրագիր կազմեր, և սահմանէր թէ ինչ առարկաներ անհրաժեշտ են, այն միայն ուսուցանել, և այդ վերջնական որոշումը հաստատուելով Հոգեոր Շայրազյն Խնանութիւնից, մեր զպրոցական պատմութեան մէջ մի նոր դարավլուխ կազմը, ազատելով զպրոցները այս կամ այն պարոնի կամայականութիւնից:

Ըստհանրապէս խօսելով մեր զպրոցների վերայ, մոռացոյ մի քանի խօսք էլ նուիրել մեր օրիորդաց զպրոցներին, ուր օրիորդները պէտք է պատրաստուին տնտես և ապագայ ընտանիքի մայր լինելու. Ըստ իս մեր օրիորդաց ծխական զպրոցներում նուրբ շատ նուրբ հիւսուածքներ անելու տեղ աւելի նպատակայարմար է օրիորդներին պարագեցնել կեանքի անհրաժեշտ աշխատութիւններով — կարու կտուրով ևն: